

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

25.01.2006 նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Վ.Դանիելյանը, Վ.Դավթյանը, Հ.Պետրոսյանը, Յու.Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Ա.Աղազարյանը.

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ Ա.Գյուլբենկյանը:

Նխատում լավեցին հետևյալ հարցերը.

1. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

1.1 Հաշվետվություն 2005թ. դեկտեմբերի 12-ից 13-ը ժնկում կայացած MONEE ծրագրի անդամ - երկրների համակարգողների հանդիպմանը մասնակցության վերաբերյալ.

/Զեկուցող՝ Ա. Գյուլբենկյան/

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն 2005թ. դեկտեմբերի 12-ից 13-ը ժնկում կայացած MONEE ծրագրի անդամ - երկրների համակարգողների հանդիպմանը մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:

/Արձանագրային/

1.2 Հաշվետվություն 2005թ. դեկտեմբերի 12-16-ը ժնկում կայացած «Մարդահամարներ և կացարանների հաշվառումներ» խորագրով աշխատանքային նիստին մասնակցության վերաբերյալ.

/Զեկուցող՝ Գ. Գևորգյան, Ա. Գյուլբենկյան/

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն 2005թ. դեկտեմբերի 12-16-ը ժնկում կայացած «Մարդահամարներ և կացարանների հաշվառումներ» խորագրով աշխատանքային նիստին մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:

/Արձանագրային/

2. Այլ հարցեր - Առաջարկություններ ՀՀ ՎՊԽ անդամներին.

2.1 Գ.Գևորգյանին՝ 2006թ. փետրվար ամսին ՀՀ ՎՊԽ հավանությանը ներկայացնել Սպառողական գների հաշվարկման համար օգտագործվող Սպառողական գամբյուղի նոր կառուցվածքը:

2.2 Հ.Պետրոսյանին՝ ՀՀ ԱՎԾ ինտերնետային էջում տեղադրել վիճակագրական ցուցանիշների աղյուսակները մարզային և տարածաշրջանային կտրվածքով:

2.3 Վ.Դավթյանին՝ օժանդակել Հ.Պետրոսյանին մարզային կտրվածքով վիճակագրական ցուցանիշների աղյուսակները պատրաստելու և ինտերնետային էջում տեղադրելու աշխատանքներում:

2.4 ՀՀ ՎՊԽ անդամներին՝ օժանդակել Հ.Պետրոսյանին մարզային կտրվածքով վիճակագրական ցուցանիշների աղյուսակների պատրաստման աշխատանքներում՝ իրենց կողմից համակարգվող ոլորտների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվություն տրամադրելով:

/Արձանագրային/

07.02.2006 նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Վ.Դանիելյանը, Վ.Դավթյանը, Հ.Պետրոսյանը, Յու.Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Ա.Աղազարյանը.

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Գ.Գյուրջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա.Հարությունյանը:

Նիստում լավեցին հետևյալ հարցերը.

1. ՀՀ ԱՎԾ կողմից 01.04.2004թ.-31.03.2005թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան Միավորված Ազգերի Չարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին.

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Թույլատրել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Միավորված Ազգերի Չարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակին տրամադրել ՀՀ ԱՎԾ կողմից 01.04.2004թ.-31.03.2005թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան հետևյալ՝ տրամադրվող անվանագերծված տեղեկատվությունը զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրատարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:

/Անհատական/

2. ՀՀ ԱՎԾ կողմից 01.04.2004թ.-31.03.2005թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան ՀՀ առողջապահության նախարարության Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտին տրամադրելու թույլտվության մասին.

/Չեկուցող՝ Գ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

1. Ներկայացված հարցի վերաբերյալ որոշում չընդունել:

2. Առաջարկել ՀՀ ՎՊԽ անդամ Գ.Գևորգյանին դիմող կողմից լրացուցիչ պարզաբանումներ ստանալ՝

- Ինտերնետ կայքում տեղադրվելիք տեղեկատվության բովանդակության վերաբերյալ,

- Տրամադրվող տեղեկատվության դեգազրեգացման ակնկալվող մակարդակի վերաբերյալ,

- ՀՀ ՎՊԽ առաջիկա նիստին հրավիրել դիմող կողմի ներկայացուցչին (ներկայացուցիչներին):

/Արձանագրային/

3. ՀՀ ՎՊԽ 2005թ. մայիսի 25-ի թիվ 03-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

/Չեկուցող՝ Ա. Հարությունյան/

Որոշեցին՝

ՀՀ ՎՊԽ 2005թ. մայիսի 25-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաների մասին» ձև թիվ 1-ՏՏ (Տեղեկատվական տեխնոլոգիա) (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 03-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. «Տեղեկատվական տեխնոլոգիաների մասին» ձև թիվ 1-SS (Տեղեկատվական տեխնոլոգիա) (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևի 10-րդ և 30-րդ տողերում «ներառյալ ԱԱՀ» բառերը փոխել «առանց ԱԱՀ» բառերով:

2. Տեղեկատվական տեխնոլոգիաների մասին» ձև թիվ 1-SS (Տեղեկատվական տեխնոլոգիա) (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության լրացման հրահանգի բաժին III-ի

ա) 1-ին կետում «հիման վրա» բառերից հետո լրացնել «առանց ավելացված արժեքի հարկի» բառերով:

բ) 9-րդ կետի երկրորդ պարբերությունում՝ «դրանց մատուցման դիմաց ստացված փաստացի վճարի չափով (անկախ վճարման ձևից) և ներառում են.» բառերը փոխել «այն ժամանակաշրջանի համար, որի ընթացքում մատուցվել են ծառայությունները, անկախ վճարումից՝ հաշվեգրման սկզբունքով և ներառում են.» բառերով:

/Նորմատիվ/

15.02.2006թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Վ.Դանիելյանը, Վ.Դավթյանը, Հ.Պետրոսյանը, Յու.Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Ա.Աղազարյանը.

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժին առաջատար մասնագետ Լ.Խաչատրյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Գ.Գյուրջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. 2005թ. պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Լ. Միրզոյան/

Որոշեցին՝

Հաստատել 2005թ. պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը:

/Անհատական/

2. ՀՀ ԱՎԾ աշխատակազմի, ըստ ծրագրերի, 2005թ. հաշվեկշիռները հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Հայրապետյան/

Որոշեցին՝

Հաստատել ՀՀ ԱՎԾ 2005թ. հաշվեկշիռը՝ ըստ ծրագրերի (համապատասխան ձևերով և հավելվածներով կցվում են)։

1. Պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (01.07.01) առ 01.01.06 թ.

(հազ.դրամ)

ԱԿՏԻՎ			ՊԱՍԻՎ		
1	Հիմնական միջոցներ	616595.7	1	Ֆինանսավորում	31533.1
2	Նյութեր և պաշարներ	27504.2		այդ թվում՝	27442.8
3	Սակավարժեք և արագամաշ առարկաներ	78243.5		բյուջեից	
4	Ծախքեր արտադրության և այլ նպատակների	-		այլ միջոցներ	
5	Դրամական միջոցներ	0.3	2	Ֆոնդեր և նպատակային նշանակման միջոցներ	694839.2
6	Հաշվարկներ	5871.3	3	Հաշվարկներ	1842.4
7	Ծախսեր	-	4	Արտադրանքի իրացում և եկամուտներ	0.3
8	Վնասներ	-	5	Կապիտալ շինարարության ֆինանսավորում	-
9	Կապիտալ շինարարության ծախսեր	-			
ՀԱՇՎԵԿՇԻՌ		728215.0	ՀԱՇՎԵԿՇԻՌ		728215.0

2. Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում (01.07.03) առ 01.01.06թ.

(հազ.դրամ)

ԱԿՏԻՎ			ՊԱՍԻՎ		
1	Հիմնական միջոցներ	48338.0	1	Ֆինանսավորում	5962.0
2	Նյութեր և պաշարներ	4892.0		այդ թվում՝	5962.0
3	Սակավարժեք և արագամաշ առարկաներ	9663.6		բյուջեից	
4	Ծախքեր արտադրության և այլ նպատակների	-		այլ միջոցներ	
5	Դրամական միջոցներ	-	2	Ֆոնդեր և նպատակային նշանակման միջոցներ	58001.6
6	Հաշվարկներ	2304.6	3	Հաշվարկներ	1234.6

ԱԿՏԻՎ			ՊԱՍԻՎ		
7	Ծախսեր	-	4	Արտադրանքի իրացում և եկամուտներ	-
8	Վնասներ	-	5	Կապիտալ շինարարության ֆինանսավորում	-
9	Կապիտալ շինարարության ծախսեր	-			
ՀԱՇՎԵԿՇԻՌ		65198.2	ՀԱՇՎԵԿՇԻՌ		65198.2

/Անհատական/

3. ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կողմից՝ 01.01.1998թ.-01.01.1999թ., 01.04.2004թ.-31.03.2005թ. և 01.01.2005թ.-31.12.2005թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները (ըստ հետազոտվող բնակավայրերի անվանումների և ծածկագրերի) «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիային տրամադրելու թույլտվության մասին.

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Թույլատրել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիային տրամադրել ՀՀ ԱՎԾ կողմից 01.01.1998թ.-01.01.1999թ., 01.04.2004թ.-31.03.2005թ. և 01.01.2005թ.-31.12.2005թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները (ըստ հետազոտվող բնակավայրերի անվանումների և ծածկագրերի) հետևյալ՝ տրամադրվող անվանազերծված տեղեկատվությունը զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չիրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/